Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն – 3

ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԸ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ԳՐԻԳՈՐ ԴԱՏՈՒՄՅԱՆԸ

Ավագանու 15 անդամներից նիստին մասնակցում էին 12-ը՝ Նորիկ Անդրեասյանը, Տիգրան Գալստյանը, Ազատ Զաքարյանը, Արտաշես Խաչատրյանը, Աշոտ Հունանյանը, Վահագն Մկրտչյանը, Կարեն Շահազիզյանը, Արմենակ Սարգսյանը, Բաբկեն Վարդանյանը, Հայկ Վարդանյանը, Մուշեղ Տաշչյանը, Սարիբեկ Օվոյանը:

Նիստին մասնակցում էին նաև աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Անժելա Խաչատրյանն ու քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Հարություն Բաղդասարյանը:

Այնուհետև միաձայն հաստատվում է նիստի հետևյալ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը

1. Աշտարակ քաղաքի 2017 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին:
   /Զեկուցող՝ Ա. Խաչատրյան/
2. Աշտարակ քաղաքային համայնքի գլխավոր հատակագծի փոփոխության նախագծի վերաբերյալ ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացությունը հաստատելու և հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:
   /Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/
3. Աշտարակ համայնքի ավագանու 13.12.2016թ.-ի հմ. 8-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
   /Զեկուցող՝ Ա. Խաչատրյան/
4. Հրաչյա Սիմոնյանին, Մերի Բեգլարյանին, Տիգրան Խաչատրյանին, Ռազմիկ Տերտերյանին, Արտաշես Խաչատրյանին, Արսեն Խաչատրյանին, Սամվել Քալաշյանին, Վոլոդյա Քալաշյանին և Զարգանդ Ալեքսանյանին հարկային արտոնություն տալու մասին:
   /Զեկուցող՝ Ա. Խաչատրյան/

Լ Ս Ե Ց Ի Ն - 1 - Աշտարակ քաղաքի 2017 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Անժելա Խաչատրյանը:

Զեկուցողը նշեց, որ անհրաժեշտություն է առաջացել բյուջեում կատարել փոփոխություն և սեփական եկամուտների մասով նախորդ տարվա նկատմամբ նախատեսել 15%-ի աճ:

Զեկուցման վերաբերյալ մյուս նյութերն աղյուսակների տեսքով կցվում է սույն արձանագրությանը:

Փոփոխության անհրաժեշտության մասին ընդարձակ պարզաբանումներ տվեց համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանը:

Զեկուցողին հարցեր տվեցին Տ. Գալստյանը, Կ. Շահազիզյանը, Ս. Օվոյանը, Հ. Վարդանյանը, Մ. Տաշչյանը, Ա. Հունանյանը, Ա. Զաքարյանը, Ա. Խաչատրյանը:

Բարձրացված հարցերին պատասխանեցին և լրացուցիչ պարզաբանումներ տվեցին Թ. Շահվերդյանն ու Ա. Խաչատրյանը:

Քվեարկության արդյունքում որոշումն ընդունվեց միաձայն:

12 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

<u>ԼՍԵՑԻՆ - 2</u> - Աշտարակ քաղաքային համայնքի գլխավոր հատակագծի փոփոխության նախագծի վերաբերյալ ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացությունը հաստատելու և հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

Օրակարգային երկրորդ հարցը ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Հարություն Բաղդասարյանը:

Նա նշեց, որ փոփոխությունը վերաբերվում է Աշտարակ քաղաքի տարածքում գտնվող 02-001-0462-0019 ծածկագրից 0.2994հա, 02-001-0105-0006 ծածկագրով 0.3874հա և 02-001-0462-0018 ծածկագրով 0.1895հա հողակտորներին:

Որոշակի պարզաբանումներ ստանալու համար զեկուցողին հարցեր տվեցին Ս. Օվոյանը, Կ. Շահազիզյանը, Ն. Անդրեասյանը և Ա. Սարգսյանը:

Հարցերին տրվեցին սպառիչ պատասխաններ:

Քվեարկության արդյունքում առաջարկվող փոփոխություններն ընդունվեցին:

12 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

<u>ԼՍԵՑԻՆ - 3</u> - Աշտարակ համայնքի ավագանու 13.12.2016թ.-ի հմ. 8-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

Փոփոխության վերաբերյալ հարցը ներկայացրեց ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Անժելա Խաչատրյանը:

Զեկուցողը նշեց, որ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 13-ի հմ. 8-Ա որոշման մեջ տեղ է գտել վրիպում և Ա. Թումանյանին տրամադրված հարկային արտոնությունը հողի փոխարեն նշվել է գույքահարկ /66.996 ՀՀ դրամ/:

Առաջարկվեց համաձայնություն տալ հիշյալ փոփոխությունը կատարելու համար:

Առարկություններ չեղան և ընդունվեց միաձայն որոշում:

12 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

<u>ԼՍԵՑԻՆ - 4</u> - Հրաչյա Սիմոնյանին, Մերի Բեգլարյանին, Տիգրան Խաչատրյանին, Ռազմիկ Տերտերյանին, Արտաշես Խաչատրյանին, Արսեն Խաչատրյանին, Սամվել Քալաշյանին, Վոլոդյա Քալաշյանին և Զարգանդ Ալեքսանյանին հարկային արտոնություն տալու մասին

Զեկուցումով հանդես եկավ և հարցը ներկայացրեց Անժելա Խաչատրյանը:

Զեկուցողը նշեց, որ արտոնությունների վերաբերյալ հարցը քննարկման է ներկայացվել, հիմք ընդունելով ինը քաղաքացիների դիմումներն ու ուսումնասիրության արդյունքները:

Միաժամանակ նշվեց, որ արտոնության գումարը կազմում է շուրջ 480.000 ՀՀ դրամ:

Որոշակի պարզաբանումներ ստանալու նպատակով Ա. Խաչատրյանին հարցեր տվեցին Ս. Օվոյանը, Կ. Շահազիզյանը, Վ. Մկրտչյանը, Մ. Տաշչյանը, Տ. Գալստյանը:

Բարձրացված հարցերին պատասխանեցին համայնքի ղեկավարն ու բաժնի պետը:

Քվեարկության արդյունքում ստանալով 11 կողմ ձայն, որոշումն ընդունվեց:

Քվեարկությանը չի մասնակցել Արտաշես Խաչատրյանը:

11 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Օրակարգի հարցերը սպառված են:

Ավագանին արտահերթ նիստի աշխատանքներն ավարտեց 2016 թվականի դեկտեմբերի 26-ին:

ԱՎԱԳԱՆԻ՝

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ	ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ	ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ
ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ	ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ	ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ	ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ
ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ	ՄՈՒՇԵՂ ՏԱՇՉՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԳՐԻԳՈՐ ԴԱՏՈՒՄՅԱՆԸ
ՏՊ
Ա.Հ.